ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՎ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մինչև 200.000 դրամ գույքային պահանջներով պատահարների գրանցում

Ուշադրություն՝ այս գործընթացն իրականացվում է առանց ոստիկանության ներկայացուցչի համաձայնության և (կամ) ներկայության:

Գործընթացին բավարարող պայմանները

1. Տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար (ՃՏՊ),
2. ՃՏՊ-ում ներգրավված են միայն երկու ավտոտրանսպորտային միջոց (ՏՄ), որոնք ունեն գործող ԱՊՊԱ պայմանագրեր,
3. ՃՏՊ-ի արդյունքում վնաս է պատճառվել միայն այդ ՏՄ-ներին,
4. վնաս պատճառած անձն ընդունում է, որ ՃՏՊ-ի առաջացման մեջ միակ մեղավորն ինքն է և առկա է փոխադարձ համաձայնություն դրա վերաբերյալ,
5. տուժողի կողմից վնաս պատճառողից ակնկալվող վնասի հատուցման չափը չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը,
6. համաձայնեցված հայտարարագրի լրացման և դրա միջոցով ապահովագրական հատուցում ստանալու համար առկա է վնաս պատճառած (մեղավոր) վարորդի վարած ՏՄ-ի վերաբերյալ կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերության ներկայացուցչի կողմից հեռախոսի միջոցով կամ ՃՏՊ-ի վայրում տրված համաձայնությունը:

Վարորդների գործողությունները

1. վնաս պատճառած (մեղավոր) վարորդը իր վարած ՏՄ-ի վերաբերյալ կնքված և գործող ԱՊՊԱ Վկայագրում վրա նշված հեռախոսահամարով անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) տեղեկացնում է Ապահովագրողին տեղի ունեցած ՃՏՊ-ի մասին՝ պատասխանելով Ապահովագրողի ներկայացրած հարցադրումներին,
2. Ապահովագրողի համաձայնությամբ լրացվում է համաձայնեցված հայտարարագիրը և ՃՏՊ-ին մասնակից վարորդները ստորագրում են այն,
3. վարորդները իրենց ՏՄ-ներով ազատում են ճանապարհի երթևեկելի մասը և հեռանում են վթարի վայրից:

Ապահովագրական հատուցում ստանալու կարգն ու ժամկետները

1. ՃՏՊ-ի տեղի ունենալուց հետո **եռամսյա ժամկետի ընթացքում** տուժողը պարտավոր է հատուցում ստանալու համար դիմում (կցելով ստորագրված համաձայնեցված հայտարարագիրը) ներկայացնել ապահովագրական ընկերությանը և հնարավորություն տալ ապահովագրական ընկերությանը զննել վթարված ՏՄ-ն,
2. ապահովագրական ընկերությունը հատուցում ստանալու դիմումը ստանալուց հետո **3 աշխատանքային օրվա** ընթացքում ապահովում է **վնասի** փորձաքննության իրականացումը և արդյունքների մասին ծանուցումը Տուժողին և Ապահովադրին,
3. ծանուցման պահից սկսած **5 աշխատանքային օրվա օրվա ընթացքում վնասի** լրացուցիչ և (կամ) կրկնակի փորձաքննության նշանակման պահանջի բացակայության կամ այդ ընթացքում փորձաքննության արդյունքների համաձայնության պահից հետո **1 աշխատանքային օրվա ընթացքում** ապահովագրական ընկերությունն ընդունում է հատուցումը վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու մասին որոշում, որի մասին **1 աշխատանքային օրվա ընթացքում** ծանուցում է տուժողին,
4. հատուցման որոշման հետ համաձայնության առկայության և հատուցման եղանակը գումարի ստացմամբ ընտրելու դեպքում ապահովագրական ընկերությունը **1 աշխատանքային օրվա ընթացքում** հատուցման գումարը վճարում է տուժողին կամ տուժողի կողմից հատուցման եղանակը վերանորոգում ընտրելու դեպքում՝ ապահովում է ՏՄ-ի վերանորոգումը: